

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնտեսական նորություններ. «Ավելի լավ կրթություն՝ ավելի բարձր աճի համար»

Աշուն 2024

Ամփոփագիր

Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում (ԵԿԱ) աճը հավանական է, որ 2023թ. 3.5 տոկոսից այս տարի նվազի մինչև 3.3 տոկոս: Աճի այս մակարդակը նշանակալիորեն թույլ է 2000-19թթ. 4.1 տոկոս միջին աճից և զգալի ցածր այն մակարդակից, որն անհրաժեշտ է տարածաշրջանի միջին եկամտով երկրներին՝ բարձր եկամտով երկրի կարգավիճակի հասնելու համար:

Այս տարի ԵԿԱ երկրների կեսի, այդ թվում՝ տարածաշրջանի երկու խոշորագույն տնտեսությունների՝ Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի աճի տեմպը դանդաղեց: Ի տարբերություն դրա, 2024 թ. կանխատեսվում է Լեհաստանի՝ տարածաշրջանի երրորդ խոշորագույն տնտեսության աճի վերադարձ 3.2 տոկոսի՝ բարձրանալով անցյալ տարվա սոսկ 0.2 տոկոսից՝ պայմանավորված տնային տնտեսությունների սպառման վերականգման բարձր ցուցանիշով:

Մասնավոր սպառումը և աջակցող հարկաբյուջետային քաղաքականությունը ԵԿԱ-ում աճը պայմանավորվող հիմնական գործոններն են: Մասնավոր սպառումն ամրապնդվել է՝ իրական աշխատավարձերի և սոցիալական տրանսֆերտների բարձրանալու և բազմաթիվ երկրներում վարկավորման բարձր աճի պատճառով: Ի տարբերություն դրա, արտաքին պահաջարը նվազ նպաստավոր է մնում առևտրի հիմնական գործընկերների, մասնավորապես՝ Եվրամիության տնտեսական թույլ աճի պայմաններում:

Գնաճի տարեկան ցուցանիշի մեղմանը 2024թ. օգոստոսին նվազեց մինչև 3.6 տոկոս՝ անցյալ տարվա վերջի 4.6 տոկոսից, սակայն այն զգալի բարձր է 2018-19թթ. -ի 2.7 տոկոս միջինից: Ապրանքների գնաճը երկրների մեծ մասում նվազեց, իսկ ծառայությունների գնաճը մնաց բարձր՝ մասամբ պայմանավորված ԵԿԱ-ում աշխատուժի ծախսերի կտրուկ աճով: Ավելի ցածր գնաճը որոշ կենտրոնական բանկերի դրդեց նրան, որ սկսեն նվազեցնել վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքը, սակայն իջեցումները համեստ էին, քանի որ քաղաքականության զուլավորությունը գերակայում էր:

Հարկաբյուջետային քաղաքականության խստացումը ԵԿԱ-ի երկրների մեծ մասում այս տարի կրկին հետաձգվեց՝ ծախսերի ավելացումներով ավելի քան չեզոքացնելով ավելի բարձր եկամուտները: Օախսերն էականորեն ավելացել են հանրային հատվածի աշխատավարձերի և նվազագույն աշխատավարձերի, կենսաթոշակների, սոցիալական նպաստների և պաշտպանական ծախսերի մեծ բարձրացումների պատճառով:

ԵԿԱ-ում աճը հավանական է, որ հաջորդ տարի նվազի մինչև 2.6 տոկոս՝ պայմանավորված Ռուսաստանի աճի տեմպի կտրուկ դանդաղմամբ: Առանց Ռուսաստանի, աճն ընդհանուր առմամբ պետք է անփոփոխ մնա՝ 3.2 տոկոս 2025թ. -ին՝ նախքան 2026թ. -ին կայունանալը մինչև 3.7 տոկոս: Գնաճի հետագա նվազումները, եկամտի առողջ աճի և առևտրային

հիմնական գործընկերների տնտեսության աստիճանական վերականգնման հետ մեկտեղ, հավանական է, որ օժանդակեն տարածաշրջանում վերականգնմանը:

Սակայն պահպանվում են հեռանկարի՝ աճի տեմպի նվազման զգալի ռիսկերը: Դրանք ներառում են համաշխարհային և տարածաշրջանային լարվածության հետագա ասիականացումը, գնաճի ավելի դանդաղ վերադարձը կենտրոնական բանկի թիրախներին և Եվրամիությունում և Ռուսաստանում ավելի թույլ աճը:

ԵԿԱ-ի մասով աճի նվազման սպասումներից հետևում է, որ եկամուտներն ավելի դանդաղ կմոտենան բարձր եկամտով տնտեսությունների մակարդակին: Կադրերի սխալ բաշխումն ու պակասը ավելի ու ավելի են դառնում կաշկանդող սահնանափակում՝ բազմաթիվ ընկերությունների համար դառնալով ներդրում անելու, արտասահմանից նոր տեխնոլոգիաներ, կապիտալ և փորձառություն բերելու հնարավորությունը և նորարարությունը սահմանափակող: Տարածաշրջանի երկրների մեծամասնության՝ բարձր եկամտով երկրի կարգավիճակին մոտենալու հավակնության համար անհրաժեշտ են ուսյալ և արտադրողական աշխատողներ:

Սույն նորությունների II մասի կիզակետում կադրերն ու մարդկային կապիտալն են: Այն ուրվագծում է բարեփոխումները և քաղաքականությունները, որոնք կարող են օգնել տարածաշրջանի ժողովրդի հսկայական ստեղծարար ուժի բացահայտմանը, ինչը կարևոր է տնտեսական աճն ու զարգացումը խթանելու համար:

ԵԿԱ տարածաշրջանի երկրները իրավացիորեն հպարտանում են իրենց կրթական նվաճումներով: Տարածաշրջանը զգալի առաջընթաց է գրանցել կրթության ընդհանուր հասանելիության ապահովման ուղղությամբ, որտեղ երեխաները միջինը 12.6 տարի հաճախում են դպրոց՝ գերազանցելով զարգացող մյուս տարածաշրջաններից շատերին: Բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածությունը ևս բարձր է, իսկ բուհերի շրջանավարտների միջին համախառն տոկոսը (40 տոկոս) գերազանցում է համաշխարհային միջինը (31 տոկոս):

ԵԿԱ երկրների մեծ մասի առջև ծառայող հիմնական մարտահրավերը ընդգրկվածությունը չէ, այլ կրթության որակը, որը վերջին տարիներին նվազել է: Ավագ դպրոցի 15-ամյա սովորողների շրջանում անցկացվող՝ սովորողների միջազգային գնահատման թեստային միավորները վերջին տասնամյակում նվազել են, հատկապես՝ ՔՈՎԻԴ-19 համավարակից հետո: Տարածաշրջանի երկրներից շատերում դասավանդման տարեկան ժամաքանակը զգալիորեն քիչ է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրներից: Հիմնական (տարրական և միջնակարգ) կրթության խզվածքները հատկապես մեծ են անբարենպաստ միջավայրերից սերող սովորողների համար: Շատ սովորողներ ընգրկվում են մասնագիտական կրթության համակարգերի հոսքում, որոնք հիմնարար հմտություններ չեն տալիս կամ չեն նախապատրաստում նրանց մուտքն աշխատաշուկա:

Արդյունքներով բարձրագույն կրթությունն էլ ավելի է թերանում, քան հիմնական կրթությունը: Հիմնական կրթության կամ մեկ շնչի հաշվով եկամտի նման մակարդակով զարգացող մյուս տարածաշրջանների երկրները շատ ավելի լավ համալսարաններ ունեն: ԵԿԱ-ի միայն ինը հաստատություն է ընդգրկված «Times Higher Education»-ի աշխարհի լավագույն 500 համալսարանների վարկանիշավորման ցանկում: Բարձրագույն կրթության ցածր որակի հիմքում ընկած են թույլ կառավարումը, ուսումնական ժամանակավրեպ ծրագրերը, ֆինանսավորման պակասը և թերի ենթակառուցվածքը: Հանրային խոշոր համալսարանների

ոչ համարժեք կառավարումը հաճախ նպաստում է սովորողների թվաքանակի նվազմանը: Բարձրագույն կրթության համակարգերից շատերը թերֆինանսավորում են և բացակայում է պատշաճ ենթակառուցվածքը՝ հետազոտական լաբորատորիաները և համապատասխան դասասենյակները:

Բարձրագույն կրթության և աշխատաշուկայի կարիքների միջև անհամապատասխանությունը ևս կրթության թույլ որակի արտացոլումն է: Գործատուներն հաճախ են հայտնում, որ շրջանավարտների մոտ պակասում են անհրաժեշտ «փափուկ»՝ թիմային աշխատանքի և հաղորդակցության հմտությունները, ինչպես նաև իրենց ճյուղերին հատուկ մասնագիտական հմտությունները: Կրթության և աշխատաշուկայի կարիքների միջև անհամապատասխանությունը հանգեցնում է ԵԿԱ-ում մարդկային ներուժի զգալի կորստի և մասամբ պայմանավորում ուղեղների արտահոսքը, որը բացասաբար է անդրադառնում տարածաշրջանի երկրներից շատերի վրա:

Կրթության որակի անկումը շրջելու և կրթության որակը վերականգնելու համար երկրները պետք է կենտրոնանան ուսուցիչների վերապատրաստման բարելավման վրա, ուսուցիչներին, տնօրեններին և ընտանիքներին ճշգրիտ կրթական տեղեկատվություն տրամադրելու, ուսումնական ծրագրերը վերանայելու և կրթական ենթակառուցվածքում ներդրումներ անելու վրա: Բարձրագույն կրթության մակարդակով համալսարանական համակարգի համախմբումը կբարելավի որակը, կկրճատի ծախսերը և դյուրին կդարձնի ժողովրդագրական փոփոխություններին համապատասխան ճշտումը: Հետազոտական կենտրոնների ինտեգրումը բարձագույն կրթության համակարգում կարող է բարելավել դրանց նորարարական կարողությունը: Չսովորող, չաշխատող երիտասարդներին անհրաժեշտ է ներգրավել արտադրական կամ կրթական միջոցառումներում: Որակյալ կրթության առաջնահերթության սահմանմամբ և ցլյանս ուսումնառությանն աջակցելով՝ ԵԿԱ երկրները կարող են կրճատել կադրերի սխալ բաշխումն ու վատնումը և առաջ մղել կայուն տնտեսական աճն ու զարգացումը: